ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

«ԹԻՎ 16 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

375069 ք.Երևան Դրոյի -17
հեռ. 24-00-23

МЭРИЯ г.ЕРЕВАНА

«ПОЛИКЛИНИКА N16» ЗАО

375069 г. Ереван ул. Дро-17
тел. 24-00-23

N 2018

«18» 12 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵԹԻՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/4)-15/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ, ք. Երևան, Դրոյի 17, 28 սենյակ հասցեով, Գ. Վարդանյանին (հեռ. 010 24-04-70), մինչև 2014թ. դեկտեմբերի 27-ը, ժամը 11:00-ն:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Դրոյի 17 հասցեում, 28 սենյակում, 2014թ. դեկտեմբերի 27-ին, ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը (օրինակելի ձևերը կցվում են):

Գնման առարկա է Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա:

Սույն ծանուցմանը կցված գնման հայտում նշված դեղորայքի և պատվաստանյութերի այն չափաբաժինների գծով, որոնցով սահմանված են ապրանքների ֆիրմային անվանումները, գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցները գնային առաջարկով համարժեք ապրանք առաջարկելու դեպքում ներկայացնում են նաև առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը և համառոտ տեխնիկական բնութագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՏՆՕՐԵՆ Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ